

ՍԱՀԱԿԻ ԵՎ ՄԵՍՐՈՊԻ
«ԿԱՏԱՐԵԱԼ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ԽՆԴԻՐԸ

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Խորենացու Պատմութեան երրորդ գրքի ՄԱ – ՄԳ, ՄԵ, ՄԶ, ՄԹ, ԿԳ գլուխներին քաղված 12 գրվագ, այդ թվում գրերի գյուտի պատմութեանը վերաբերող որոշ հատվածներ, իրենց համապատասխանութիւնն ունեն, երբեմն նույնիսկ բառացի, Փարպեցու Պատմութեան էջերում: Ն. Բյուզանդացին արձանագրել ու համադրել է այդ ընդհանրութիւնները և «Ուստի՞ են ապա այն նմանութիւնք իմաստից և բանից ի գիրս երկոցուն պատմ-չաց» սեփական հարցադրումին պատասխանել այսպես. «Հասարակաց աղբերէ՛ յորմէ առած են երկոքին: Այս աղբիւրս հաւանական է որ ըլլայ յիշատակեալն ուրեք ի հին մատեանս մեր Կատարեալ պատմութիւնն Սահակայ և Մեսրոպայ (տե՛ս Սոփերք Հայկականք, հ. Բ, երես 37): Կորիւն վարդապետի Պատմութիւնն չի կրնար համարուիլ Կատարեալ Պատմութիւն, և պէտք է ենթադրել թէ ետ նորա մի ոմն յերկրորդ կամ ի Կրտսեր թարգմանչաց, դասակից Խորենացուն գրած է ընդարձակագոյն զՊատմութիւն Սահակայ և Մեսրոպայ, յորմէ քաղած են ազատութեամբ թէ Փարպեցի և թէ Խորենացի»¹:

Ն. Բյուզանդացին հակված է այդ Կատարեալ պատմութեան մաս համարելու Փարպեցու Պատմութեան կազմում և ճառընտիրներում անկախաբար ներկայացող «Տեսիլ սրբոյն Սահակայ» բնագիրը իր մեկնութեամբ:

Գուցե խնդիրը հեշտ լուծելի կլինե՞ր՝ եթե կարելի լինի հենվել Խորենացու և Փարպեցու կենսագրութիւնների ստույգ ժամանակագրութեան վրա: Սակայն Փարպեցին դիտե Մովսես փիլիսոփային (հարկավ Խորենացին է), բայց անտեղյակ է նրա Պատմութեան գոյութեանը (թեև մասնագետները հակառակ ապացույցներ են բերում), ուստի Ազաթանգեղոսից ու Փավստոսից հետո երրորդ պատմիչն ինքն է: Այս պարագայում միակ բացատրութիւնն այն է, ինչ առաջարկում է Ն. Բյուզանդացին՝ երկու պատմիչն էլ քաղում են մեկ ընդհանուր աղբյուրից: Սահակին ու Մաշտոցին վերաբերող Կորյունի երկից ավելի ընդարձակ (կատարյալ) աղբյուր հայագիտութեանը ծանոթ չէ: «Սոփերքի» Բ հատորում եղած և Սահակ Պարթևին առնչվող նյութերը Խորենացու և Փարպեցու երկերում առկա այդ տասներկու ընդհանրութիւնների աղբյուրագիտական հիմք չեն տալիս²:

Ավելին, Փ. Անթաբեյանի կատարած պրպտումների շնորհիվ այժմ պարզված է, որ Սոփերքի Բ հատորում հրապարակված այդ բնագիրն ինքն է

¹ «Քննասեր». ինքնագրութիւնք Նորայրի, պրակ Բ, Ստոքհոլմ, 1887, էջ 17-18:

² Այստեղ ներկայացված և մասամբ մեր խնդիրներին առնչվող բնագիրը «Պատմութիւն վասն սրբոյն Սահակայ հայրապետին և Մեսրոպայ վարդապետին» է, որ ավելի շուտ ներբողեան պիտի կոչել (Սոփերք, Բ, էջ 5-42):

քաղուհներ կատարում պատմիչներ Մ. Խորենացու, Ղ. Փարպեցու, նրանցից օգտվող Դրասխանակերտցու երկերից և, փաստորեն, Վարդան Արևելցու գրչին պատկանող XIII դարի ստեղծագործություն է³: Եվ հիրավի, Ն. Բյուզանդացու ուշադրությունն առած ստեղծությունը որոշ տարբերակումով առկա է նաև Վարդան վարդապետի «Բան գովեստի պատմագրաբար՝ վասն սրբոյն Սահակայ և Մեսրոպայ և այլոց թարգմանչացն» երկում:

Սոփերք

Այսպիսիք էին վարք երանելեացն, սրբոյն Սահակայ և մեծին Մեսրոպայ, և այսպիսի քաղաքավարութիւնք նոցա, մանաւանդ թէ ևս առաւել քան զսոյն զոր գրեալ է ի կաարեալ պատմութեանն նոցա:

(ԱՀ, Բ 37)

Բան գովեստի

Այսպիսին էին վարք երանելեացն և այսպիսի հանդէս քաջութեան նոցա և բարուք քաղաքավարութեան նոցա, մանաւանդ թէ ևս առաւել, որսլէս և յայտ է ի պատմութեանց նոցա, ի բանից և ի գործոց:

(ԲՄ, 7, էջ 393)

Մեզ հետաքրքրող հիմնական տարբերությունը Սահակին և Մեսրոպին վերաբերող պատմության կամ պատմությունների «կատարեալ» լինել-չլինելն է, սակայն կարևորը ոչ այնքան նրանց բնութագրումն է, որքան այն հարցը, թե Վարդան Արևելցին նկատի ունի Կորյունի մեզ ծանոթ աշխատությունը, թե՞ պատմագրական մի այլ երկ, որի գոյությունը ենթադրելի է թեկուզ «Տեսիլի» և նրա մեկնության ինքնակա առկայության փաստով: «Կատարյալ պատմության» գոյությունը հնարավորության օգտին է խոսում վաղմիջնադարյան մի այլ բնագիր ևս, որի գոյությունն արձանագրված է Հայ-վրացական բանասիրության մասնագետների աշխատություններում: Աթոսի Իվերոն վանքի ձեռագրական հավաքածուն ներկայացնելիս Ն. Մառը ուշադրության է առել N 8 գրչագրի (նախկին թվահամարը՝ 57) 249r₁ – 250v₂ թերթերի «Կատարումն ներսես մեծի որգի սուրբ Սահակ Պարթևի, որը սուրբ Գրիգորի վեցերորդ սերնդից էր» հայերենից թարգմանված բնագիրը⁴: Նրա նախնական դիտարկմամբ՝ այս երկի հայերենը եղել է Ղաղար Փարպեցու ձեռքի տակ և նրա Պատմության աղբյուր ծառայել⁵:

Տասնամյակներ անց, IX-X դարերի վրաց և հայոց գրական փոխհարաբերություններն ուսումնասիրելիս Ի. Աբուլաձեն հայկական ճառընտիրներում պրպտեց ու հրատարակեց վրացերեն թարգմանությունը աղբյուր ծա-

³ Փ. Փ. Ա ն թ ա ղ ա ն, Սահակ Պարթևի «Վարքի» և նրա հեղինակի մասին. – ՊԲՀ, 1968, N 2, էջ 129-146: Ն ու յ ն ի Վարդան Արևելցու ներքողը՝ նվիրված Հայոց գրերի գյուտին. – «Բանբեր Մատենադարանի», N 7(1974թ.), էջ 365-398:

⁴ Նկարագրությունը տե՛ս R. B l a k e, Catalogue des manuscrits géorgiens de la Laure d'Iviron au Mont Athos. – Revue de l'Orient Chretien, 28 (1931-1932), N 3-4, p. 326. N 8 (57) ձեռագրի բովանդակությունը տե՛ս Պ. Մ ու ղ ա ղ ա ն, Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Երևան, 1982, էջ 112-123:

⁵ Н. М а р р, Из поездки на Афон (О грузинских переводах с армянского). – ЖМНП, 1899, март, с. 19.

ույժի հայերեն մոտավոր բնագիրը⁶, որը, բնականաբար, Վարդան Արևելցու «Բան գովեստից» քաղված լինել չէր կարող, եթե չասենք ճիշտ հակառակը՝ ինքը կարող էր Վարդանի ճանաչած աղբյուրներից մեկը լինել: Կարծում ենք, աղբյուրագիտական առումով բնավ զանցառելի չէ X դարի առաջին տասնամյակների մատենագիր Ահարոն Վանանդեցու վկայությունը, թե ս. Նունեի իաչի պատմությունը գրելիս ինքը տեղեկություններ է քաղել նաև «ի Վարուց սրբոյ, Սահակայ»⁷: Ուստի այդ հուշարձանի երբեմնի գոյությունը հախուռն մերժումը Փ. Անթաբյանի կողմից արդարացի չենք կարող նկատել⁸:

Վաղմիջնադարյան այդ վարքագրական երկի, ավելի շուտ քաղվածքի, աղբյուրագիտական նշանակությունը պարզելու համար նախ բերենք նրա գրաբարով ավանդված տեքստը, այն օժտելով ի. Աբուլաճեի հավաքած տարընթեցումների մասամբ պարզեցված առկցումով և ապա հայերենի թարգմանենք հին վրացերեն թարգմանությունամբ պահպանված բնագիրը, որի լիարժեք հայերեն համապատասխանությունն առ այսօր երևան չի բերված:

Կատարումն սրբոյն Սահակայ
Պարթևի

Կատարումն Ներսես Մեծի որդի սուրբ Սահակ Պարթևի, որը սուրբ Գրիգորի վեցերորդ սերնդից էր

Եւ յայնմ հետէ¹ ամփոփեալ զինքն առաքինւոյն² յամենայն աշխարհածուփ զբաւսանաց³ աղաւթից միայն պարապէր⁴ և վարդապետութեան⁵:

Վասն զի⁶ բազումք⁷ յեպիսկոպոսաց և յայլոց պատուական քահանայից⁸ ոչ երբեք ժուժէին⁹ մեկուսանալ ի մշտաբուղիս¹⁰ աղբերէ¹¹ վարդապետութեան սրբոյն¹²:

Եւ կեցեալ³ ամս բազումս¹⁴ և հասեալ¹⁵ յերկար¹⁶ ծերութիւն¹⁷ նստէր¹⁸ ի սուրբ եկեղեցւոջն ի վերայ բեմբին մերձ ի սեղանն Աստուծոյ ի սուրբ կաթողիկէին:

Եւ վասն զի ոչ դոյր իւր¹⁹ արու²⁰ որդի, բայց միայն դուստր մի, զոր էր տուեալ²¹ ի կնութիւն²²

Հայրերի վաղեմի սովորույթի համաձայն [ս.Սահակը] կարգով ամուսնացած էր և չուներ արու զավակ, այլ միայն մեկ դուստր, ուստի տխուր էր «Մի գուցե մեղքիս պատճառով ընդհատվում է իմ նախնայաց տոհմը»:

Եվ Քրիստոսի այս սպասավորը ձեռք քաշեց այսրաշխարհային բոլոր հոգսերից ու զբազմեց աղոթելով: Նա իր մոտ ուներ յոթանասուն աշակերտ և անապատում վարում էր հրեշտակային կյանք:

Եվ այնուհետև, երբ եպիսկոպոս եղավ՝ վարում էր նախնայաց կարգավորությամբ, ուստի սրբազան եպիսկոպոսներից և արժանավոր քահանաներից շատերը

⁶ ი ლ ი ა ა ბ უ ლ ა ძ ე, ჩართული და სომეხური ლიტერატურული ურთიერთობა IX-X სს-ში, თბილისი 1944, გვ. 80-84.

⁷ Տե՛ս Պ. Մ ու Ր ա դ յ ա ն, Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը, Երևան, 1996, էջ 138:

⁸ Փ. Ա ն թ ա բ յ ա ն, Սահակ Պարթևի Վարքի և նրա..., էջ 145-146:

Համազասպայ տեառն Մամիկոնէից²³ և Հայոց²⁴ սպարապետի²⁵, որ ծնաւ ի Համազասպայ²⁶ երիսարու²⁷ որդիս²⁸ զսուրբն Վարդան և զսուրբն Հմայեակ²⁹ և զերանելին Համազասպեան, որոց³⁰ ետ և կնքեաց սուրբ³¹ այրն³² Աստուծոյ Սահակ³³ զստացուածս գեաւդից³⁴ իւրոց³⁵ և ազարակաց, և որ³⁶ ինչ միանգամ³⁷ էր իւր³⁸ ետ նոցա ի ժառանգութիւն³⁹ և զաւակաց⁴⁰ նոցա⁴¹ մինչև յաւիտեան⁴²:

Աւրհնեաց զնոսա աւրհնութեամբ բազմաւ⁴³ և պատուիրեաց նոցա պահել զվարդապետութիւն⁴⁴ պատուիրանի⁴⁵ սրբոյն Գրիգորի, զոր ուսոյց և աւանդեաց⁴⁶ ամենայն աշխարհիս⁴⁷ Հայոց⁴⁸ ճշմարտութեամբ⁴⁹: Եւ ամբարձեալ զձեռս⁵⁰ իւր վախճանեցաւ⁵¹ խազագութեամբ⁵² ի գաւառին Բագրևանդայ⁵³, ի գիւղն⁵⁴ որ անուանեալ⁵⁵ կոչի Բլուր, ի սկզբան⁵⁶ ամին երկրորդի⁵⁷ Յաղկերտի⁵⁸, որդւոյ⁵⁹ Վռամայ, թագաւորին Պարսից⁶⁰, յամսեանն Նաւասարդի որ աւր երեսուն էր⁶¹ ամսոյն⁶², յերկրորդ⁶³ ժամու աւուրն, որ եւ զաւր ծննդեան⁶⁴ սրբոյն ի ստոյգ⁶⁵ գիտողաց⁶⁶: Ուրոց⁶⁷ առեալ զտենչալի⁶⁸ նշխարս⁶⁹ սրբոյն⁷⁰ բազմութեամբ⁷¹ քահանայից և ազատաց⁷², տարան ի գաւառն Տարաւնոյ⁷³, ի բնիկ գիւղն⁷⁴ իւր սեպհական⁷⁵, յանուանեալն⁷⁶ Աշտիշատ⁷⁷ և անդ կազմեալ զՀանդստարան⁷⁸ սրբոյն⁷⁹ պատեցին⁸⁰ զպարկեշտ⁸¹ մարմինն⁸² արդարոյն⁸³ ըստ արժանի կայանից⁸⁴ ճշմարտին⁸⁵: Ուր⁸⁶ և շինեալ եկեղեցի⁸⁷ մեծապայծառ⁸⁸ և վկայարան⁸⁹ սրբոց⁹⁰ զարդարեցին⁹¹ պատուական և մեծազին սպասուք⁹² հիմնացուցեալ⁹³ կանդնեցին ի տեղւոջն վանս⁹⁴ բազմու-

չէին բաժանվում նրա անընդհատ վարդապետությունից ու հորգորից, քանի որ աղբյուրի պես բխում էր իմաստությամբ և նրա մոտ հաստատված աստվածային հոգով:

Այսպես հասավ բարի ծերության, և մեկ օր, երբ նա նստած էր սուրբ Կաթողիկե եկեղեցում՝ սուրբ խորանին մոտիկ, զարմանահրաշ տեսիլ ներկայացավ նրան. հայտնվեց տիրոջ հրեշտակը և ասաց, թե «Քեզ Դանիելի պես ուղարկեցի, ով սրտաբուխ մարդ, գու չես մեղանչել, այլ զորականների դործած մեղքերի պատճառով նրանցից վերացավ ձեր տոհմը»: Եվ մխիթարեց նրան հրեշտակը, և քանի որ բազում էին նրա արժանավորությունները՝ ուստի սույն գրությամբ [այստեղ] պատմել չենք կարող:

Եվ [իշխանները] ըմբոստացան թագավորի դեմ, ուստի ուղեցին [Սահակին] տանել Պարսկաստան՝ անհավատ թագավորի և պարսից աստիճանավորների դնգի առաջ ասելու [այն], ինչ մենք չկարողացանք կուսել նրա խոսքերի խորքը:

Եվ զարմացան թագավորն ու ամենայն բազումք, թե ինչպես մահվան վախ չունի իր սրտում և այսպիսի հանգիստ խղճով իմաստություն է խորհում:

Եվ հրամայեց իբրև քաջ այրի և մտքով անվախի՝ նրան արծաթ տալ: Սակայն նա չվերցրեց և ասաց. «Քո արծաթը թող քեզ մնա», և ողորմածություն խնդրեց նրանց հանդեպ, ովքեր զայրացել էին իրենից: Եվ այսպես ուզարկեց:

Երանելին իր դստերը կնության էր տվել Համազասպին՝ Մա-

թեան⁹³ պաշտաւնէից. կարգեալ⁹⁶ դարման⁹⁷ անպակաս պտղոց ի հանգիստ⁹⁸ առաւելեալ⁹⁹ եղբայրութեանն¹⁰⁰. ժողովս¹⁰¹ տարևորաեանս¹⁰² աշխարհայորդոր¹⁰³ բազմութեամբ¹⁰⁴ հաստատեցին¹⁰⁵ ի տեղուջն, որ ըստ ժամանակի¹⁰⁶ բաղմամբոյն ժողովրդաւք կամաւոր յաւժարութեամբ ազատք և քահանայք դաւառին, այլ և կարի¹⁰⁷ յոյժ ի հեռաւոր տեղեաց^{107a} դիմեալք յաւր կարդադրութեան^{107b} նորա կատարեն¹⁰⁸: Որ և¹⁰⁹ բազում աւղնականութիւնս¹¹⁰ առողջութեան¹¹¹ ըստ իւրաքանչիւր արտից¹¹² շահէին¹¹³ ի նշխարաց սրբոյն եւ¹¹⁴ ուրախալից սրտիւ¹¹⁵ դառնային ի բնակութիւն¹¹⁶ յիւրաքանչիւր¹¹⁷ փառաւորելով¹¹⁸ զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

միկոննից տիրոջը, որը Հայաստանի սպայապետն էր: Իսկ նա Համազասպին շնորհեց երեք որդի՝ սուրբն Վարդան, սուրբն Հմայակ և երանելին Համազասպյան, որոնց այդ աստվածային այրը տվեց իր ժառանգությունն ու ավանները:

Իսկ այն ժամանակ, երբ նրա մոտ եկան Հայաստանի իշխանները և խնդրում էին նրան, որպեսզի վերստին նստի իր աթոռին, նա թողել էր աթոռը և անցել Հունաց բաժին: Իսկ նա չէր հնազանդվում ու հարկադրյալ նրանց պատմեց տեսիլը:

Եվ իշխանները մեծապես տխրեցին: Ու նա որպես կաթողիկոսական աթոռի պահապան նրանց տվեց երանելի Մաշտոցին, որը Մեսրոպ էր կոչվում և չէր ուզում հեռանալ նրանից: Սակայն աստվածային այն այրը նրան հորդորեց ու ասաց. «Գնա սրանց հետ, երբ ես ելնեմ այս աշխարհից՝ դու նույնպես հեռացիր կյանքից»:

Եվ այնուհետև, երբ հասավ այս սրբի վախճանի ժամանակը, օրհնեց այդ մանուկներին և իր ողջ ժառանգությունը հավերժ տվեց նրանց ու նրանց տոհմակիցներին: Եվ խրատում էր ամուր պահպանել սուրբ Գրիգորի վարդապետությունը, որը ավանդեց ու կարգավորեց ամենայն Հայաստանը ճշմարտությամբ: Ապա ձեռքերը պարզեց դեպի երկինք և աղոթքով խաղաղությամբ վախճանվեց Բագրևանդի երկրում, Բլուր կոչվող դյուղում՝ Պարսից արքա Վուամի որդի Հազկերտ արքայի երկրորդ տարվա սկզբին:

Նա վախճանվեց Նավասարդ ամսի, որ է ապրիլ, 30-ին, օրվա

երկրորդ ժամին, հետևաբար նույն ամսի հենց այն օրը. որ ծնվել էր այդ երանելին: Եվ քահանաների ու ազնվականների բազմությունը վերցրեց նրա բաղձալի նշխարները և տարավ Տարոնի երկիր, իր սեփական բնիկ ժառանգության գյուղ, որ կոչում են Աշտիշատ: Եվ անգ շինեցին նրա հանգստարանը, ու տեղը մեծ կարգավորությամբ վանք հաստատեցին և նրանում լիառատ պարեն ու հագուստ ունեցող եզբարց բազմություն: Ասկա սահմանեցին նրա հիշատակի տոն, որին ժողովրդային բազմություն է հավաքվում, հեռավորներ ու մերձավորներ. իրենց կամոք երանելու հիշատակին են դալիս ազնվականներ և քահանայից բազմություն: Եվ նրա բարեխոսությամբ շատերը բուժվում էին իրենց ամեն մի ցավից ու այգպես վերադառնում իրենց տուն՝ ի փառավորություն Հոր և Որդու և Սուրբ Հոգու, որին է փառք հավիտյանս հավիտենից, ամեն:

Համեմատության առնված ձեռագրեր

<i>D</i> – 4871 (XIII դ.)	<i>O</i> – 993 (1456 թ.)
<i>E</i> – 4709 (1344 թ.)	<i>Թ</i> – 4869 (1482 թ.)
<i>F</i> – 7443 (XIV դ.)	<i>Չ</i> – 4822 (1491 թ.)
<i>J</i> – 3797 (XIV – XV դ.)	<i>R</i> – 3791 (XV դ.)
<i>K</i> – 1524 (1401 թ.)	<i>T</i> – 4676 (XV դ.)
<i>M</i> – 4802 (1404 թ.)	<i>Ls</i> – Ղ. Փարպեցու Պատմ. (1904 թ.)
<i>N</i> – 996 (1442 թ.)	

Խորագիր Կատարումն... Պարթևի] Հանգիստ Սահակայ սրբոյ հայրապետին հանուրց Հայոց *N*, Հանգիստ սրբոյն Սահակայ հայրապետին Հայոց *F*, Մահ սրբոյն Սահակայ հայրապետի *O*, Կատարումն սրբոյն Սահակայ հայրապետին *EJ KMP*, Բարեկենդանի յառաջի շաբաթուն՝ շաբաթի աւր սրբոյն Սահակայ կատարումն *T*, Սրբոյ Սահակայ կատարումն *D*.

1 յայնմ հետէ *FNLS*], այնուհետև + զինք *K*, առաքինւոյն] առ ի նոյն *IKP*, առաքինոյն + սրբոյն Սահակայ *DEFJ KMNPR*T, + սրբոյն *Q*, 3

զբաւսանաց] զբաղմանց MOR, 4 պարապեալ R, 5 ~ և վարդապետութեան պարապէր FN, վարդապետութեան + ի փառս Աստուծոյ Q, 1-5 և յայնմ հետէ... վարդապետութեան] 0, 6 եւ վասն զի Q, 7 բազումն K, 8 և յայլոց պատուական քահանայից] և ի քահանայից DEJKMPT, ի պատուական F, 9 երբեք ժուժէին] կարէին Q ժուժէին + տեւել և LsOR, 10 մշտնջենաբուխ DEJKMNPQRT, 11 աղբերէն R, 12 վարդապետութենէ սրբոյ N, սրբոյն + ուր ուրեք ի գէպ երիս ոստայնի (ոստանի D) կամ ի հովս DEIKMPRT, ուր (ուրեք O, ուրեք] R) ուրեք զիմէր (զիպէր FOOR) ի տեղիս ոստայնի (ոստանին F, ոստայնին N, մենաստանին R, ոստայնի] Q, յոստանի O) կամ (I և F) ի հովս (հովիտս N, + ոստանի Q) FNOQR, 13 կացեալ FN, 14 բազում FNOQ 15 և հասեալ] հասեալ EIKMP, եհաս N, 16 ի երկար RLs, 17 ծերութեան DIKNQR, ծերութիւնս F, ծերութիւն + բաց ունելով զեպիսկոպոսապետութիւնն ամս: ՄԱ: O, 18 նստէր... կաթողիկէին [զրվազր քաղված է Տեսիլքի խորագրից - ծան. Ի.Ա.] Ls, 19 իւր] նմա Q նորա FMNR, 20 արու] DFKNOR, ~ որդի արու Q, 21 ~ տուեալ էր DEJKMOPQT, 22 ի կնութիւն]յամուսնութիւն N, կնութեան Ls, 23 ~ Մամիկոնէից տեառն EJKMPRT, Մամիկոնենից տեառն D, 24 և Հայոց] Հայոց EJMOPQ, 25 սպայապետի Q, ասպարապետի, DEFJKMOPT, ասպարապետի, որ + և EFJKMNOPT, 26 ի Համազասպ R, 27 արու]EJKMOPQ 28 արու որդիս] ուստերս T, 29 զսուրբն Հմայեակ] զՀմայեակ JKMP, Հմայեակ DE, Հմայեակ MO, 30 որոց + կտակ EJKMOP, 31 սուրբն F, 32 այրն] F, 33 Իսահակ Q, ~ այրն Աստուծոյ սուրբն Սահակ NRT, 34 գեղից EJPR, գիւղից F, գեղից DKMNOQ, 35 իւրոց] Q, 36 զոր Q, 37 միանգամ] FNQ, 38 էր իւր] ունէր Q, ~ իւր էր DJKMNOPQT, 39 ի ժառանգութիւն] F, ի ժառանգութեան R, 40 զաւակի DEFN, 41 նոցա + յետ նոցա KR, 42 յաւիտեանս DEKT, ցյաւիտեան PLS, և զաւակաց նոցա մինչև յաւիտեան] Q, 43 աւրհնութեամբ բազմալ] FOQLs., 44 զվարդապետութիւն] զպատուիրանս F, զհրամանս N, 45 պատուիրանի OQ, պատուիրանին R, 46 աւանդեաց]պատուիրեաց F, աւանդեաց+ճշմարտութեամբ FNQRLs, 47 ամենայն աշխարհիս]աշխարհիս FNQ, ամենայն երկրիս R, երկրիս DEJKMP, 48 Հայոց+ծառայել (+Աստուծոյ F) և երկիր պագանել (+միումն FO) միայնոյ (+միումն Q), 49 ճշմարտի (ճշմարտին FOQR,]N Աստուծոյ] KMNP+ և OQR) տեառն մերոյ] QR, և] MNQR, փրկչին] MNOR, Յիսուսի Քրիստոսի (+և ամենակալ սուրբ հոգւոյն, որում վայել է փառք յաւիտենից յաւիտեան O) DEFJKMNOPRT, 50 զձեռն, 51 վախճանեցաւ + երանելի սուրբ Հայրապետն EJKT + երանելի OQ], 52 խաղաղութեամբ DEJKRT, խաղաղութեամբ + հանդստիլ DEJMPTLs, + հանգստութեամբ OQ, + հանդստեամբ R, 53 Բաղրևանդեայ F, 54 ի դեղն DEFJKMNOQ, 55 անուանեալ] OQRLs., 56 ի սկզբան] FNORLs., 57 երկրորդի] J, երկրորդ DRT, յառաջին Q, 58 Ազկերտի Q, 59 որդւոյն DEFJKMNPQRT, 60 Պարսից արքային DEJKMOPT, արքային Պարսից NQR, թաղաւորի Պարսից F, 61 էր] FN, 62 ամսոյն] OQR, 63 յերկրորդ]յերրորդ N, և յերրորդ F, 64 ծննդեանն JKNQLs., 65 ի ստոյգ]ստոյղ R, 66 գիտողացն R, գիտողաց + և ի պատմութենէ երանելի (JK) առն սրբոյ (JK) հաստատեալ գրեցաք զաւր ծննդեան սրբոյն (JQ) ի նմին ամսեան (ամսոյ Q) եղեալ (JQ) KQ, + և (JR) ի պատ-

մութենէ երանելոյն (երանելոյ RLS) սրբոյն (JNLs) առն (առնն R, + Կորեան Ls., + Կորենայ N) Հաստատեալ (Հաստատուն R) գրեցաք (+ լինել նոյն Ls., + լինել և նոյն R) աւր (JN, + և Ls.) ծննդեան (JN) սրբոյն (JN, + լեալ N) ի նմին ամսեանն (ամսեան Ls.) NRLs., + և ի պատմութենէ սրբոյն սրբոյ T, J F) առնն (~ առն սրբոյն JMOP) Կորեան (JDJMOP) Հաստատել (Հաստատեցաք F) գրեցաք (JF, + լինել FT) նոյն (JDJMOP) զաւր (աւր FT) ծննդեան սրբոն (սրբոյ M, + Սահակայ O) ի նմին ամսեան եղեալ (JFT, լինել JMOP) DJMOP, 67 որոյ JRT, 68 զտենչալին D, 69 նշխար Q, 70 սրբոյն + Սահակայ EJKP 71 բազմութեան F, բազմութիւն NR, 72 ~ ազատաց և քահանայից DEJRT, արանց և քահանայից F, ազատաց + սրբոց O, 73 Տարունոյ DRT, Տարան F, Տարունոյ M, 74 դեղն DKMNPQR, գեաւոյն EJT, դեղն F, 75 սեպական JDEFJKMPT, 76 յանուանեալն JEJKMPT, 77 Յաշտիշատ DJKPT, 78 անդ կազմեալ զհանգստարանն] J զհանգստարանն Ls., 79 սրբոյն]J, 80 պատեցին] R, և պատեցին EKMP, և պատուեցին FJ, 81 պատուեցին զպարկեշտ] FR, 82 մարմին DJKMOPQT, մարմին]R, զմարմինս F, 83 արդարոյն] FOQ, արդարոյն] երանելոյն NR, 84 Կայենիցն R, Կայենից DEJKMT, 85 ~ ճշմարտին կայանից F, ճշմարտին] սրբոյն DEJKNPT, սրբոց M, երանելոյն Q, ճշմարտին + ազատաց և քահանայից N, 86 ուր որ EJMKNPQR, 87 եկեղեցիս JMOT, 88 մեծապալծառս EJKMOP, 89 ի վկայարանի DEJKMOP, վկայարան]Q, 90 սրբոյն DEFJKMNOPT, սրբոց]Q, 91 և զարդարեցին DEJKMNOPQT, 92 մեծագին սպասիւք DEJKMPQT, մեծագին և պատուական սպասիւք O, պատուական սպասուք F, պատուական սպասիւք N, 93 Հիմնեցուցին N, Հիմնացուցին EO, 94 ի տեղւոջն վասն] յաղագս Q, վասն ի տեղւոջն և N, ի տեղւոջն վասն R, 95 բազմութիւնն MN, բազմութեան]Q, բազմութիւն DEJMOP, բազմութեամբ F, 96 և կարգեալ JKMOPT, կարգեալ]Q, 97 դարմանս QR, դարմանս] կերակուրս EJK, զպետս N, 98 պտղոց ի հանգիստ FNRLs., 99 առաւելեալ... ամէն] պտղաբեր ծառոց ի պէտս պաշտաւնէիցն, և ամ յամէ զյիշատակս սրբոյն կատարէին, որ և բազում աւգնութիւն առողջութեամբ ի հեռաւորաց և մերձաւորաց դային և շահէին ի նշխարաց սրբոյն Q, 100 եղբայրութեանցն EJMOP, 101 և ժողովս N, 102 տարևորս տարեկանս EFJMPT, 103 աշխարհի այս յորդոր D, աշխարհաց որդորս R, 104 բազմութեամբ + կարգեալ R, 105 զայս Հաստատեալ O, Հաստատեցին ի տեղւոջն] NO, 106 որ ըստ ժամանակի... յաւժարութեամբ]DEJKMPT, 107 և կարի] կարի F, 107ա տեղաց O 107բ յաւր կարգադրութեան] Հանգստեան R, յիշատակի N, 108 այլ և կարի... կատարեն]DEJKT, կատարեն] տաւնեն FNR, 109 որ և] ուստի և FNR, 110 աւգնականութիւն R աւգնութիւն N. աւգնականութիւնս] DE, 111 առողջութիւն DEJKMPT, և առողջութիւն R, 112 ախտիցն DT, 113 շահեալ F, շնորհեալք DR, շահեալք N, շնորհեալ EJKMPT, 114 և] DFR, 115 սրտիւք F, 116 ի բնակութիւնս DFO ի բնակութիւն] JNR, 117 յիւրաքանչիւր]իւրեանց FO, + տեղիս N, ~ յիւրաքանչիւր բնակութիւնս R, դառնային ի բնակութիւնս յիւրաքանչիւր]FJKMP, 118 փառաւորելով զհայր և զորդի և զսուրբ Հոգին (զհոգին F) այժմ (JDF) և (JFN) միշտ (JDF) որում (JFNR) փառք (JFNR) յաւիտեանս յաւիտենից, ամէն (JFN)] փառաւորելով զԱս-

տուև և Քրիստոսի անճառ մարդասիրութեանն (մարդասիրութեան E) փառք յաւիտեանս, ամէն (JM) EKMՔ, փառաւորելով զՔրիստոս Աստուած և մեզ ամենեցուն բարեխաւս ունիմք զսուրբ Հայրապետն առ Քրիստոս Աստուած, զի թողցէ զմեզս մեր և զննջեցելոց մերոց T (JL.S.)

Ամենից առաջ արձանագրելի է, որ զրաբար այս կարճառոտ բնագրի կազմողը կամ խմբագրողը անտեղյակ չէ Կորյունի հեղինակած վարքին, այլև որոշ տեղեկութիւններ քաղում է նրանից ու տալիս նրա անունը՝ թեկուզ աղավաղումով (Կորենայ N): Այդ, իհարկե, բնավ չի նշանակում, թե մենք կասկածի տակ ենք առնում վրացերենի թարգմանված Հայերեն բնագրի անկախ գոյութիւնը: Արձանագրենք այն ակնհայտ իրողութիւնը, թե բերված զրաբար տեքստը ամբողջութեամբ և աննշան տարրնթերցումներով քաղված է այսօր Ղաղար Փարպեցու Պատմութեան Ա դրվագ ներկայացող բնագրից, մասնավորապես նրա ԺԸ հատվածն է, ինչը նկատված է վաղուց՝ Ն. Մառի նախնական ծանուցումից սկսած: Սակայն նույնքան վաղուց էլ ասված է, որ այդ դրվագը՝ Սահակի Պատմութիւնը կամ Տեսիլը, ինքնակա երկ է, Ն. Ակինյանի կարծիքով արարված VIII դարի առաջին կեսին⁹, սակայն եթե Շահապիվանի 446/7 թ. ժողովի կանոնների նախաբանում Սահակի Տեսիլը հիշատակվում է («...ի փոխել նոցա յերկրէս (իմա՛ Սահակայ և Մեսրոպայ – Պ. Մ.) լինէր եղծումն և քայքայումն կարգաց և աւրինաց սրրոյ եկեղեցւոյ, որպէս և տեսանէր ի տեսլեան յառաջագոյն սուրբ քահանայապետն Սահակ...»)¹⁰, ուրեմն այն կամ նրա ինչ-որ տարբերակ հիրավի արդեն գոյութիւն ունեւր¹¹: Փարպեցին ինքն է այդ դրվագը սեփական Պատմութիւն մոծել, թե՞ այն տեղի է ունեցել հետագայում, որևէ խմբագրի ձեռքով՝ դժվար լուծելի հարց է և ներկա դեպքում մեզ առանձնապես չի զբաղեցնում: Ուժի մեջ պիտի մնա Ն. Մառի աշխատանքային այն դրույթը, թե վրացերեն թարգմանութեամբ պահպանվածի Հայերեն բնագիրն աղբյուր է ծառայել պատմիչի համար:

Թարգմանաբար ավանդված այդ բնագրում կան առկա զրաբար տարբերակի համեմատութեամբ հավելումներ, որոնք քաղված են Մովսես Խորենացու Պատմութեան երրորդ գրքի մի քանի գլուխներից, միանգամայն այլ Հաղորդականութեամբ՝ III, ԽԹ + ԾԱ + ԽԹ + ԿԵ + ԿԶ և այլն: Այստեղ արժե ուշադրութեան առնել երկու հանգամանք.

ա) Խորենացին ընթերցողին զգուշացնում է. «Բայց թէ ասիցէ ոք, պարտ է մեզ զասացեալսն մեծին Սահակայ ի Պարսից հրապարակախօսութեանն դրել՝ դիտասցէ, զի ոչ յումեքէ ի լսելիս մեր հասեալ է բովանդակն ճշմարտութեամբ, և ոչ մեք ի պատմութեանս հիւսել հաւանիմք»: Ուրեմն Խորենացու ձեռքի տակ եզած աղբյուրը մանրամասնութիւններ չի բովանդակել, ինչպես որ այդպիսիք չկան «Կատարումն ...սրբոյն Սահակայ» այս բնագրում. բայց խիստ ուշադրավ է, որ Խորենացու ճիշտ նույն գլուխներից քաղված մի բնագրական հարասում էլ գտնում ենք «Ս. Շու-

⁹ Հ. Ն. Ե. ր. ս. է. ս. վ. Ա. կ. ի. ն. Ե. ան, Տեսիլ ս. Սահակայ, Վիեննա, 1948, էջ 10:

¹⁰ Կանոնագիրք Հայոց, Ա, աշխատասիրութեամբ Վ. Ա. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 425:

¹¹ Գոյութիւն ունեցող կովանների ու կարծիքների հանգամանալի քննութիւնը տրված է Ն. Ակինյանի Հիշյալ աշխատութեան մեջ:

չանիկի վկայաբանության» հայերեն համառոտ խմբագրություն կազմում, որին մենք երիցս անգրագարձել ենք¹²: Այս բոլորի հիման վրա վստահաբար կարող ենք ասել, թե V դարից արդեն դոյություն է ունեցել Սահակ Պարթևի վարքն ու քաղաքավարությունը պատմող մի երկասիրություն, որից անկախաբար օգտվել են ինքնացին, Փարպեցին, Շուշանիկի վարքի համառոտ խմբագրություն կազմողը, Ահարոն Վանանդեցին և վերջապես, «Կատարումն... սրբոյն Սահակայ» երկի վրացերեն թարգմանիչը VII-VIII դարերի շրջանակում: Բայց եթե նկատի ունենանք նաև ինքնացուցող Պատմության մեջ չներկայացված առանձին իրողությունների առկայությունը վրացերեն թարգմանության մեջ, մասնավորապես նրա առաջին իսկ նախադասությունը, թե «Հայրերի վաղեմի սովորույթի համաձայն [ս. Սահակը] կարգով ամուսնացած էր և չունեւ արու զավակ, այլ միայն մեկ դուստր, ուստի տխուր էր՝ «Մի գուցե մեղքիս պատճառով ընդհատվում է իմ նախնայաց տոհմը», որը միայն մասամբ է արձագանքում ինքնացուցող ունեցածին, ապա այն, որ Սահակին հայտնվում է տիրոջ հրեշտակը և մխիթարում, թե տոհմի ընդհատումը քո մեղքի պատճառով չէ, այլ՝ զորականների գործած մեղքերի, կարող ենք ասել, թե որոնելի է մեկ այլ աղբյուր ևս: Ուստի արդարացի պիտի նկատել ի. Սբուլաձեի այն եզրակացությունը, թե «Ինքնացուցող և վրացերեն թարգմանության բնագրի համապատասխան տեղիները, իրարից անկախ սկիզբ են առնում հայկական ինչ-որ մեկ ուրիշ աղբյուրից»¹³, և այդ աղբյուրն է «Պատմվածք Պատմությունից» երկը¹⁴: Վերջինիս կապակցությամբ Լ. Մելիքսեթ-Բեկը պարզել է, որ այն թարգմանություն է հունարենով պահպանված *Διήγησις... նշանավոր երկի և նրան կից դարձյալ հունարենով ավանդված Catholici Armeniae քաղկեդոնական դրվածքի*¹⁵: Սակայն խոսքը բառացիորեն նրանից քաղված լինելուն չի վերաբերում, որովհետև վերջինիս մեջ Սահակը միայն մահվան առիթով է հիշվում¹⁶: «Պատմվածք Պատմությունիցը» ինքնացուցող և «Կատարումն... սրբոյն Սահակայ» հին վրացերեն թարգմանությանն ավելի մոտ է. բերում ենք այդ հատվածը Լ. Մելիքսեթ-Բեկի թարգմանությունը.

«Սրանից հետո Հայոց ազատները (ազատնի) գնացին սուրբ Սահակի մոտ՝ խնդրելով, որ նրանց ի չարն չհիշի և վերադառնա իր աթոռը: Բայց նա չլսեց նրանց և պատմեց նրանց այն տեսիլքը, որ տեսել էր նրանց քակվելու (վարատման – Պ. Մ.) մասին: Բայց իրեն փոխարեն աթոռի պահպան տվեց երանելի Մաշտոցին (Մաստոցին): Եվ նրա (Սահակի) ու Մաշ-

¹² Պ. Մ ու ը ղ ա ղ յ ա ն, Մովսես ինքնացուցող բնագրական հետքերը..., «Եջմիածին» 1992, N 6-7, էջ 94, հմմա. ն ու յ ն ի՝ Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը, էջ 112, նաև՝ Բնագրական դիտարկումներ ինքնացուցող Պատմության հեղինակային իսկազիրը վերականգնելու առնչությամբ. – Հայկազեան հայագիտական հանդէս, հատ. ԻԱ, Պեյրուսթ, 2001, էջ 80-82:

¹³ Ծ. Նժդեհձեղ, նշվ. աշխ. էջ 0146:

¹⁴ Վրացերեն թարգմանությունը տե՛ս Ծ. Նժդեհձեղ, Մովսես Պեյրուսթ, I, թ. 336-341.

¹⁵ Լ և ո ն Մ ե լ ի ք ս ե թ - Բ ե կ, Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 77-86:

¹⁶ Բնագրի ու թարգմանության վերջին հրատարակությունը տե՛ս В. А. А р у т ю - н о в а - Ф и д а н я н, Повествование о делах армянских. VII век. Источник и время, М., 2004, с. 159 (§28).

տոցի (Մաստոցի) մահից հետո երիցապետական աթոռի վրա կարգեցին Գյուտին (Կիտին)»¹⁷:

Մաշտոց անվան Մաստոց տառադարձումն իսկ բավական է՝ «Պատմվածք Պատմութիւնսիցի» հունական աղբյուր մատնացուցելու համար¹⁸, բայց քանի որ «Կատարումն... Սահակայն» թարգմանված է հայերեն բնագրից՝ այնտեղ ի շարս բաղում այլ հայկաբանութիւններ, ունենք նաև «Մաշտոց»։ Թերևս ավելի հավանական պիտի համարել այն ենթադրութիւնը, թե գոյութիւն է ունեցել հայերեն նախնական մի բնագիր – տարբերակ, որից հավասարապես օգտվում են թե՛ Փարպեցին ու նրանից հետո եկող հայ հեղինակները և թե՛ հունյն և վրացի թարգմանիչները:

Համենայն դեպս հին վրացերեն թարգմանութեամբ մեղ է հասել վաղմիջնադարյան մի բնագիր, որը չի նույնանում իրեն աղբյուր ծառայած պատմիչների երկերի հետ կամ, թերևս, ինքը կարող էր աղբյուր հանդիսանալ պատմիչների համար: Այն քաղված պիտի լինի երբեմնի մի ամբողջական երկից, որը, ի տարբերութիւն մյուս մատենագիրների մոտ եղած տեղեկութիւնների, այդ թիւում և Կորյունի երկի, հավակնել է կոչվել «Կատարեալ պատմութիւն Սահակայ և Մեսրոպայ» կամ «Վարք սրբոյն Սահակայ»: Այդ աղբյուրը հնարավորութիւն է տալիս կռահելու Մեսրոպ Մաշտոցի կրկնանվան ձևավորման եղանակը՝ «Մաշտոց, որը Մեսրոպ էր կոչվում»¹⁹: Չենք կարծում, թե սա արդյունք է խորենացու և Փարպեցու հիշած անունների հաշտեցման փորձի, թեև ինքը, բնագիրը, խարսխված է այդ գուրգ պատմիչների գործերում ներկայացված հատվածների վրա, բայց յուրովի կառուցով:

ПРОБЛЕМА "СОВЕРШЕННОЙ ИСТОРИИ" СВВ. САНАКА И МЕСРОПА

П. М. МУРАДЯН

Резюме

Наличие идентичных отрывков в Историях М. Хоренаци и Л. Парпеци о деяниях Санака и Месропа (хотя, кажется, Парпеци не был знаком с Историей предшественника) привело исследователей к мысли, что оба они пользовались одним и тем же источником, каковым не является известное нам сочинение Корюна. Предполагается, что существовала т. н. "Совершенная история свв. Санака и Месропа", частью которой является "Видение Санака", включенное в

¹⁷ Լ. Մ ե լ ի ք ս ե թ. - Բ ե կ, նշվ. աշխ., էջ 77-78:

¹⁸ Հունարեն տառադարձման շուրջ տե՛ս ն. Ա դ ո ն ց, Մաշթոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների. – Մեսրոպ Մաշտոց (հոգևածների ժողովածու), Երևան, 1962, էջ 202-203:

¹⁹ Այդ վկայութիւնն ուղադրութեան ենք առել վաղուց, տե՛ս մեր «Հայ-վրացական գրական-մշակութային փոխհարաբերութիւնների պատմութիւնից». – «Տեղեկագիր», 1964, N 10, էջ 66-67:

Историю Парпеци. Н. Бюзандаци к этой же Истории возводил опубликованный Л. Алишаном текст "Истории о патриархе св. Сахаке и архимандрите Месропе", собственно в которой и упоминается "Совершенная история". Доказав принадлежность этого сочинения перу Вардана Великого (XIII в.), П. Антабян отказался признать аутентичным предположение о существовании "Жития св. Сахака" или "Совершенной истории свв. Сахака и Месропа". Однако, о существовании такового трактата говорит автор начала X в. Ахарон Ванандеци, к тому же в древнегрузинском переводе с армянского сохранилось сочинение (рук. конца X или начала XI в.), сочетавшее экскерпты из Истории Хоренаци и Парпеци (издано И. Абуладзе), носившее название "Кончина сына Нерсэса Великого св. Сахака Партева, который был шестым поколением рода св. Григория". По мнению Н. Марра именно армянский оригинал этого грузинского перевода служил общим источником для Хоренаци и Парпеци.

Таким образом, существование "Совершенной истории свв. Сахака и Месропа" становится фактом армянской истории и раннесредневековой истории книжности.

LE PROBLEME DE « L'HISTOIRE PARFAITE » DES SAINTS SAHAK ET MESROP

PAROUYR M. MOURADIAN

R é s u m é

La présence de passages identiques sur les activités de Sahak et de Mesrop dans les Histoires de M. Khorénatsi et de L. Parpétsi (bien que Parpétsi ne semble pas avoir connu l'Histoire de son prédécesseur) a conduit les chercheurs à supposer qu'ils ont tous les deux puisé à une même source qui n'est pas l'œuvre connue de Koriun. On suppose qu'il existait un ouvrage intitulé Histoire parfaite des saints Sahak et Mesrop dont faisait partie la Vision de Sahak, incluse dans l'Histoire de Parpétsi. N. Buzandatsi fait remonter à cette même Histoire le texte de l'Histoire du Patriarche saint Sahak et de l'archimandrite Mesrop, où cette Histoire parfaite est en fait mentionnée. Ayant démontré que cette œuvre appartenait à la plume de Vardan le Grand (Aréveltsi, XIII^e siècle), P. Antabian se refuse à reconnaître l'authenticité de l'hypothèse relative à l'existence d'une Vie de saint Sahak ou de l'Histoire parfaite des saints Sahak et Mesrop. Toutefois, Aharon Vanandetsi, auteur du début du X^e siècle, parle de l'existence de ce traité. Par ailleurs, une traduction en géorgien ancien (manuscrit de la fin du X^e et du début du XI^e siècles), faite sur un texte arménien, conserve des extraits des Histoires de Khorénatsi et de Parpétsi (édités par I. Abouladzé). Elle est intitulée Décès de saint Sahak Parthev, fils de Nerses le Grand, sixième génération de la maison de saint Grégoire. D'après N. Marr, c'est l'original arménien de la traduction géorgienne qui aurait servi de source à Khorénatsi et à Parpétsi.

Ainsi, l'existence de l'Histoire parfaite des saints Sahak et Mesrop devient un fait de l'histoire d'Arménie et de l'histoire de la littérature paléochrétienne.